Պարույր Սևակ

Տունը

Հայրենադարձ հայերին

Ա.

Եվ Եփրատի ափին իմ տնակը այրվեց,
Մի բուռ մոխիր դարձավ հիմքի վրա,
Նրա միակ սյունը ծնկի նման ծալվեց,
Եվ գերանը ջարդվեց՝ մեջքի նման:
Ձեղունը՝ Եփրատի եղեգներից անթիվ,
Իբրև սև սուգ՝ մնաց սեմին փարված,
Լոկ մի ելուն մնաց կիսակործան պատից,
Աղոթող ձեռքի պես վեր կարկառված:
Շունը, չիմանալով այլևս ի՞նչ անի՝
Ոռնա՛ց, քինով հաչեց երկնքի դեմ,
Որտեղից նայում էր մի արյունոտ մահիկ՝
Հրաշքով սպասվող փրկության տեղ:
Շունը ոռնա՛ց դեռ տաք մոխիրների վրա,
Եվ Եփրատի ծանոթ եղեգնուտում,
Իմ հայրենի քամին ցավով սուլե՛ց, նվա՛ց
Աստանդական կյանքի երգը տրտում:

Բ.

Հետո ես փորձեցի տունս շինել դարձյալ
Իմ հրդեհված հոգու մի բուռ մոխրով.-

Մերթ Նեղոսի ափին, սֆինքսի աչքի տակ,
Ում գաղտնիքի՛ց անգամ իմ վիշտն էր խոր:
Մերթ հեռավոր Հինդում, Մեռյալ ծովի հանդեպ,
Ամեն մի ցամաքի, կղզու վրա -
Դամասկոսից Բեյրութ և Բեյրութից Աթենք
Ու Աթենքից մինչև Կալիֆորնիա:
Ես փորձեցի կրկին տունս վերաշինել,
Բայց... հայրենի հողից, ջրից հեռու
Ողջն անապատ թվաց... Ջո՛ւր էր տան հիմք դնել
Անապատի փխրուն ավազներում:
Բայց ի՞նչ... Դարձի ճամփան փակ էր, երկիրն՝ հեռու,
Ամեն քայլափոխում - սահմանագիծ,
Ամեն ծովի վրա - կապույտ փականք՝ նեղուց
Եվ քաղաքից - քաղաք՝ նոր անձնագիր:
Իսկ ես մի մարդ էի անտո՛ւն, անանձնագիր
Անանձնագիր մի մարդ, պանդուխտ մի հայ,
Իր մարմնից զատված մի դեգերուն հոգի՝
Անկարող իր մարմնին կրկին դառնալ...
Գ.
Դադարել էր հոգիս հավատալուց վաղուց
Ամեն մի հրաշքի՝ այն օրից դեռ,
Երբ սեփական տան մեջ, իր հայրենի հողում
Ամբողջ մի ժողովուրդ սրով մորթվեց:
Երբ մազապուրծ սրից և մահերից ամեն,
Պանդխտելով ափեր խորթ ու հեռու,
Վերադարձի հույսը երկնքի չափ անմերձ
Եվ փրկության հույսը միֆ էր թվում:
Բայց... արդ տուն եմ շինում փեշերի տակ Մասյաց,
Հրազդանի ափի՛ն, Արտաշատո՛ւմ...
Նա հառնում է իբրև պատանեկան հասակ,

Իբրև վերադարձած երջանկություն:
Նա հառնում է այստե՛ղ... Չե՛մ հավատում բնավ
Որ իմ տան դեմ այսպես երջանկորեն խրոխտ
Մասիսներն են կարծես ձուլվում եղբոր նման,
Մասիսնե՛րը - վաղո՞ւց զատված օտար թրով...
Նա հառնում է այստեղ - պապերիս այն հողում,
Ուր ամեն ինչ այնքան նո՛ր է, աննախադե՛պ,
Որի վրա բախտի արեգակն է շողում
Հին աշխարհի մթան ու խավարի հանդեպ,
Որ թանկ է ինձ համար և՛ հայրենիք իբրև
Ե՛վ օթևան իբրև նոր մարդկության...
-Այդտե՛ղ է դարավոր երազն իմ առնում կերպ,
Իմ մայր Հայաստանում, Կրեմլի լույսի տակ...

01.II.1947թ.
Երևան